Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան մտահոգիչ է համարում ՏՀԶԿ-ի կողմից Ադրբեջանի հակակոռուպցիոն բարեփոխումներին տրված գնահատականը. հայտարարություն

«08» մայիս, 2024թ. **ք. Երևան**

2024 թվականի մարտին հրապարակվել են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (այսուհետ՝ ՏՀԶԿ) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների հակակոռուպցիոն ցանցի Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի 5-րդ փուլի մոնիթորինգային զեկույցները /https://www.oecd.org/corruption/eu-for-integrity-programme-for-the-eastern-partnership.htm/ Հայաստանի, Ադրբեջանի, Մոլդովայի և Ուկրաինայի վերաբերյալ:

Այդ՝ 5-րդ փուլի մոնիթորինգային զեկույցներով գնահատվել են համապատասխան երկրների հակակոռուպցիոն քաղաքականությունների բարեփոխումների իրականացման կատարողականի մակարդակը ոլորտի տարբեր ուղղություններով, ինչպես օրինակ՝ հակակոռուպցիոն քաղաքականության մշակման գործընթացը, շահերի բախումը և ակտիվների հայտարարագրումը, ազդարարների պաշտպանությունը, դատական համակարգի անկախությունը և այլն:

Գնահատումը կատարվել է ըստ կատարողական դաշտերի՝ չորս մակարդակներով.

- ✓ Կատարողականի A մակարդակ՝ 76-100 միավորներ, կոնկրետ ուղղությամբ (ոլորտում) երկրի բարեփոխումների կատարման ընթացքը գնահատվում է նշանակալի,
- ✓ Կատարողականի B մակարդակ 51-75 միավորներ, կոնկրետ ուղղությամբ երկրի բարեփոխումների կատարման ընթացքը գնահատվում է բարձր,
- ✓ Կատարողականի C մակարդակ 26-50 միավորներ, կոնկրետ ուղղությամբ երկրի բարեփոխումների կատարման ընթացքը գնահատվում է բավարար (միջին մակարդակ),
- ✓ Կատարողականի D մակարդակ <25 միավորներ, կոնկրետ ուղղությամբ երկրի բարեփոխումների կատարման ընթացքը գնահատվում է ցածր:

Համաձայն Ադրբեջանում հակակոռուպցիոն բարեփոխումների մոնիթորինգի հինգերորդ փուլի եզակետային զեկույցի /https://www.oecd-ilibrary.org/docserver/a17aca4c-en.pdf?expires=1714044454&id=id&accname=guest&checksum=4A101B8D8FF2F253C03C6F5E76DE6B07/, **հակակոռուպցիոն քաղաքականության ուղղությամբ կատարված բարեփոխումները** գնահատվել են **նշանակալի**, ստանալով՝ **83 միավոր հնարավոր 100-ից**: Սակայն, զեկույցի 1-ին

կատարողականի դաշտի /https://www.oecd-ilibrary.org/docserver/a17aca4c-en.pdf?expires=1715016970&id=id&accname=guest&checksum=1E4044449CB278FAFC74F570FFD86C05/՝ հակակոռուպցիոն քաղաքականության ուսումնասիրության արդյունքում պարզ է դառնում, որ Ադրբեջանի ոչ կառավարական շահագրգիռ կողմերը *բավական քննադատաբար էին վերաբերվել ազգային հակակոռուպցիոն քաղաքականությանը՝ կարծելով, որ ազգային հակակոռուպցիոն փաստաթղթերը չեն շոշափում էական կոռուպցիոն խնդիրներ և այդ գործընթացում առկա չէ իրական քաղաքական կամք՝ կոռուպցիայի մակարդակի ու կոռուպցիոն ռիսկերի նվազեցման նպատակով: Ոչ կառավարական շահագրգիռ կողմերը նաև շեշտել են, որ հակակոռուպցիոն պայքարում իրական հաղորդակցություն լրատվամիջոցների, ՔՀԿ-ների, քաղաքացիների հետ առկա չէ: Հանրային խորհրդատվություններին մասնակցում են նույն հասարակական կազմակերպությունները, որոնք պետական կառույցների հետ համագործակցության երկարամյա փորձ ունեն: Այս կազմակերպություններն այնքան էլ քննադատաբար չեն վերաբերվում կառավարության գործադրած ոչ բավարար ջանքերին և չեն ցանկանում բարձրաձայնել կամ քննարկել էական կոռուպցիոն խնդիրները: Հասարակական շահագրգիռ կողմերը նկատել են, որ կոռուպցիայի բարձր մակարդակը սկսել է տարածվել բնական ռեսուրսների ոլորտներից դեպի տնտեսության այլ ճյուղեր, օրինակ՝ գյուղատնտեսություն, և այդ միտումները լուծում չեն ստանում ազգային հակակոռուպցիոն քաղաքականության փաստաթղթերով:* Սրան զուգահեռ, պետք է նշել, որ Ադրբեջանի հակակոռուպցիոն քաղաքականությանը վերաբերող գնահատականի կազմման հարցում չի պահպանվել Ստամբուլյան հակակոռուպցիոն գործողությունների ծրագրի գնահատման մեթոդաբանությամբ սահմանված այն պահանջները, որոնք վերաբերում են ոչ կառավարական շահագրգիռ կողմերի (ՀԿ-ների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների այլ ներկայացուցիչների, համապատասխան ոլորտային փորձագետների) կարծիքները զեկույցների կատարողական դաշտերի յուրաքանչյուր բաժնում ներառելու, կատարողականի գնահատման արդյունքների ամբողջական վկայակոչման կանոններին: Ոչ կառավարական շահագրգիռ կողմերի դիտարկումները իրական ազդեցություն չեն ունեցել Ադրբեջանի հակակոռուպցիոն քաղաքականության կատարողականի դաշտի վրա, հակառակ պարագայում 1-ին կատարողական դաշտը կգնահատվեր այդ դիտարկումների հաշվառմամբ: Այդ դիտարկումները նաև արտացոլված չեն Զեկույցի Գործադիր ամփոփման և 1-ին կատարողական դաշտի նախաբանում:

Ադրբեջանի վերաբերյալ ՏՀԶԿ-ը 5-րդ փուլի մոնիթորինգային զեկույցի մեկ այլ՝ 6-րդ կատարողական դաշտի ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ Ադրբեջանի դատական իշխանության անկախությանը վերաբերող գնահատականի կազմման հարցում նույնպես չեն

պահպանվել ոչ կառավարական շահագրգիռ կողմերի կարծիքները զեկույցների կատարողական դաշտերի յուրաքանչյուր բաժնում ներառելու, կատարողականի գնահատման արդյունքների ամբողջական վկայակոչման կանոնները: Այսպես, Զեկույցի 6-րդ կատարողական դաշտի ամփոփիչ հատվածում /https://www.oecd-ilibrary.org/docserver/a17aca4c-en.pdf?expires=1714982474&id=id&accname=guest&checksum=2F8F5DA9461630B79DA7BC82C3389220/ վկայակոչված՝ *քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ներկայացուցիչների ներկայացրած կարծիքի համաձայն՝ հասարակությունը դրական չի վերաբերում երկրի դատական իշխանությանը, վստահություն չկա դատական համակարգի և դատարանների նկատմամբ: Դատավորներն ու դատարանները վերահսկվում են արդարադատության նախարարության կողմից և գտնվում են դատախազության ազդեցության ներքո: Բացի այդ, ոչ կառավարական շահագրգիռ կողմերը նշել են, որ դատավորների նշանակումների և պաշտոնանկությունների մասին որոշումները հրապարակվում են առանց բավարար հիմնավորումների, Ադրբեջանի դատական համակարգում էական փոփոխություններ նախաձեռնելու և հանրային վստահության բարձրացման նպատակով՝ ընդգծել են իրական քաղաքական կամքի անհրաժեշտության մասին*: Այսպիսով, ստացվում է, որ վերոնշյալ դիտարկումները ազդեցություն չեն ունեցել Ադրբեջանի դատական իշխանության անկախության գնահատման հարցում, դրանք Զեկույցի Գործադիր ամփոփման և 6-րդ կատարողական դաշտի նախաբանում արտացոլված չեն: Նշված չեն կարծիք ներկայացրած ՀԿ-ների կամ ոչ կառավարական շահագրգիռ կողմերի անվանումները: Հիշյալ հանգամանքները ողջամիտ կասկածներ են հարուցում ոչ կառավարական սեկտորի ներկայացուցիչների կարծիքների՝ Զեկույցի մշակման և գնահատման համատեքստում ունեցած կարևորության մասին:

Սրան զուգահեռ, հարկ է ընդգծել, որ Թրանսպարենսի Ինթերնեյշնլ միջազգային հակակոռուպցիոն կենտրոնի կողմից տարիներ շարունակ հրապարակվող երկրների կոռուպցիայի ընկալման համաթվով Ադրբեջանը կայուն կերպով զբաղեցնում է վերջին հորիզոնականները: Օրինակ՝ 2023 թվականին 180 երկրների շարքում զբաղեցրել է 154-րդ հորիզոնականը՝ ստանալով 23 միավոր /https://www.transparency.org/en/cpi/2023/index/aze/, 2022 թվականին՝ 154-րդ հորիզոնականը՝ 23 միավորով /https://www.transparency.org/en/cpi/2022/index/aze/ և կորցրել է 7 միավոր 2021 թվականի համեմատ: Ադրբեջանի երբևէ ունեցած ամենաբարձր միավորը եղել է 31-ը /https://www.transparency.org/en/cpi/2017/index/aze/՝ 2017 թվականին:

Բացի վերոգրյալից, միջազգային հանրությանը հայտնի են նաև մի շարք աղմկահարույց կոռուպցիոն սկանդալներ /https://www.occrp.org/en/poy/2012//, որոնց կիզակետում գտնվել է

Ադրբեջանի նախագահը /https://www.aei.org/op-eds/azerbaijans-aliyev-is-a-strategic-liability-not-an-asset// և նրա ընտանիքի անդամները /https://www.occrp.org/en/the-pandora-papers/family-of-top-azerbaijani-politician-owns-millions-in-luxury-real-estate/, և որոնց մասին լրագրողական մի շարք հետաքննություններ /https://eurasianet.org/azerbaijans-first-family-accused-maltese-corruption-scandal/ են հրապարակվել միջազգային հարթակներում, ինչպիսին է OCCPR /https://www.occrp.org/en/azerbaijanilaundromat/the-influence-machine/-ը:

Մամուլում հայտնված նյութերում բազմաթիվ են նաև մանրամասներ Ալիևի կողմից օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների պաշտոնյաներին կաշառելու փորձերի վերաբերյալ /https://www.youtube.com/watch?v=tZ4iHvVmZbU/:

Միջազգային տարբեր հեղինակավոր կազմակերպությունների կողմից Ադրբեջանը տարիներ շարունակ դիտարկվել է որպես անազատ, բռնապետական /https://www.washingtonpost.com/opinions/do-not-forget-the-azerbaijan-128-under-the-thumb-of-a-dictator/2019/01/21/393f10c0-1b65-11e9-8813-cb9dec761e73_story.html/ տարրեր ունեցող պետություն՝ խոսքի ազատության, մարդու իրավունքների բազմաթիվ չարաշահումներով, որոնց թվում են նաև անձանց հետապնդումները այս երկրի տարածքից դուրս, իսկ դրանց թվում՝ նաև օտարերկրյա անձանց նկատմամբ հետապնդումները /https://laweuro.com/?p=14707/:

Այդ կոռուպցիոն սկանդալներում հստակ ուրվագծվում են նաև այս երկրի նախագահի կողմից բնապահպանական խնդիրների /https://phys.org/news/2019-04-caviar-oil-caspian-sea-pollution.html/ նկատմամբ ունեցած վերաբերմունքը. նրա անմիջական մասնակցությունը հանքարդյունաբերությանը /https://www.occrp.org/en/panamapapers/aliyev-mining-empire//:

Այսպիսով, չնայած այն հանգամանքին, որ ՏՀԶԿ-ը 5-րդ փուլի մոնիթորինգային զեկույցով Ադրբեջանի հակակոռուպցիոն բարեփոխումների կատարման ընթացքը ձևական առումով գնահատել է նշանակալի, այդուհանդերձ գտնում ենք, որ բարձր հեղինակություն ունեցող միջազգային մասնագիտացված կառույցի գնահատումները պետք է իրականացվեին փաստացի (բովանդակային) արդյունքների հիման վրա, և ոչ թե՝ ձևական՝ քանակական տվյալների հիման վրա՝ անտեսելով փաստացի բովանդակությունը:

Հաշվի առնելով վերոգրյալը, Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան՝ որպես Հայաստանի հակակոռուպցիոն ոլորտի առաջատար քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ցանց, մտահոգիչ է համարում ՏՁՀԿ-ի կողմից Ադրբեջանի հակակոռուպցիոն բարեփոխումների գործընթացին տրված գնահատականները և կոչ է անում այս մասնագիտացված հեղինակավոր կազմակերպությանը կատարել երկրների կատարողականի փաստացի արդյունքների գնահատում՝ բացահայտելով բարեփոխումների և իրավիճակի իրական պատկերը՝ հիմնվելով որակական և բովանդակային ցուցանիշների վրա:

Եվ այս առումով, գտնում ենք, որ հրատապ վերանայման կարիք ունի այն ՏՀԶԿ մեթոդաբանությունը, որով կատարվում է երկրների հակակոռուպցիոն բարեփոխումների գնահատումը։

Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիայի կառավարման խորհուրդ

Ծանոթություն. *Հայաստանի ՔՀԿ-ների հակակոռուպցիոն կոալիցիան մասնագիտական քաղաքացիական հասարակության կառույց է, որը հիմնադրվել է 2014 թ. նոյեմբերի 28-ին Երևանում: Կոալիցիային ներկայումս անդամակցում են ավելի քան 50 քաղաքացիական հասարակության կազմակերպություններ, իսկ քարտուղարության գործառույթները իրականացնում է Իրավաբանների հայկական ասոցիացիան:*